

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»
օրենքի նախագծի ([Պ-390-26.11.2019-SՀ-011/0](#)) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «փոխհատուցվում է» բառից հետո ավելացնել «ուսումնական տարվա ավարտից հետո» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-ին հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետությունում հավտարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման համար	Ընդունվել է:	Ընդունվել է:

		<p>վճարված գումարի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարը:» բառերը փոխարինել «մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում եւ օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման համար վճարված գումարը:» բառերով:</p>		
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան</p>	<p>Նախագծի 2-րդ հոդված</p>	<p>Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասն ամբողջությամբ հանել:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան</p>	<p>Նախագծի 2-րդ հոդված</p>	<p>Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասում «Սույն հոդվածով, ինչպես նաև այլ իրավական</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<p>ակտերով սահմանված մի քանի արտոնությունների հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:» բառերը փոխարինել «Եկամտային հարկի հաշվարկման եւ վճարման հաշվետու նույն ժամանակաշրջանում սույն հոդվածով եւ Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված արտոնություններից միաժամանակ օգտվելու հրավունք ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է օգտվել դրանցից միայն մեկից:» բառերով:</p>		
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդված	Հանել նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Օրենսգրքի 160 ¹ -րդ» բառերը փոխարինել «օրենքի 2-րդ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: